ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Արտաքին կապերի վարչության միջտարածաշրջանային համագործակցության և արարողակարգի բաժնի մասնագետ (ծածկագիր՝ 22- 34.4-Մ6-3)

Հիմնական գործառույթները՝

1.Մասնակցում է միջտարածաշրջանային և անդրսահմանային համագործակցության վերաբերյալ համապատասխան պետական մարմիններին տեղեկատվության տրամադրման աշխատանքներին.

2.մասնակցում է միջազգային կազմակերպություններից ստացված նյութերի վերաբերյալ համառոտ տեղեկանքների պատրաստման աշխատանքներին՝ ըստ անհրաժեշտության նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրելու նպատակով.

3.մասնակցում է նախարարի և փոխնախարարների մոտ արտասահմանյան պատվիրակությունների և օտարերկրյա պետությունների պաշտոնատար անձանց այցելությունների հետ կապված աշխատանքներին.

4.մասնակցում է միջոցառումների կազմակերպման արարողակարգային աշխատանքներին.

5.մասնակցում է Հայաստանի Հանրապետության և այլ երկրների վարչատարածքային միավորների միջև տարվող միջտարածաշրջանային և անդրսահմանային համագործակցության աշխատանքներին:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար նաև պահանջվում է՝

- Բարձրագույն կրթություն,
- Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ,
- Աշխատանքային ստաժ չի պահանջվում,
- Ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը՝ մինչև նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

• Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 06.09.2019թ.

• Աշխատավարձի չափը՝ 111115 (մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:

• Աշխատանքի վայրը՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 010-511-355, էլ. փոստ՝ n.kirakosyan@mta.gov.am

• Ընտրություն կատարելու եղանակն է՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

• դիմում Նախարարության գլխավոր քարտուղարի անունով

• տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի /ների/, վկայականի /ների/ պատճենները բնօրինակների հետ միասին,

• արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

• մեկ լուսանկար 3+4 սմ չափսի,

• անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: